



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝

Ապերյան

Նարինե

անուն, ազգանուն

Մեծամորի Ս. Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոց

դպրոց

ՄԵՆԹՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝

Սրապիոնյան

Աիդա

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2023

**ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Բովանդակություն	Էջ	
1.Ներածություն	3	
2.Գրականության ակնարկ	5	
3.Գործնական համատեքստ	7	
4.Հետազոտության ընթացքը		15
5.Եզրակացություն	18	
6.Գրականության ցանկ	19	

Կրթությունն ամենահզոր գենքն է,
որը դու կարող ես օգագործել
աշխարհը փոխելու համար:
ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

ՆԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Արդի կրթական բարեփոխումների շրջանում մեծապես կարևորում եմ կրթության առաջնային շահառուների՝ սովորողների դերը դասի ընթացքի վրա : Աշակերտակենտրոն ուսուցումը մեծապես վերաձևակերպում է սովորողի մասնակցությունը բուն դասի ընթացքին՝ տալով նրան հետազոտելու, պրպտելու, սովորեցնելով սովորելու, նախագծելու, քննադատելու հնարավորություն: Ստացվում է, որ սովորողը, պասիվ դաշտից ակտիվ դաշտ գալով, դառնում է էլ ավելի ինքնուրույն, նախաձեռնող, փորձում է ստեղծագործաբար մտածել ու գործել՝ արդյունքում կուտակելով գիտելիքների, հմտությունների ու կարողությունների կայուն պաշար:

Քաղաքակրթության զարգացման ողջ պատմության ընթացքում ֆիզիկական ամենաէական ազդեցությունն է ունեցել գիտատեխնիկական առաջընթացի վրա, ինքն էլ զարգացել է այդ առաջընթացին զուգահեռ: Ֆիզիկայի դասընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևավորել մտածող, ստեղծագործող և ժամանակի բոլոր մարտահրավերներին պատրաստ, ճկուն և մրցունակ քաղաքացիներ:

Հետազոտությանս նպատակը կայանում է հետևյալում .

զուգակցելով ժամանակակից մոտեցումները, հետազոտել դասավանդման նոր մոդելը և ստուգել դրա կիրառման արդյունավետությունը դասավանդման պրոցեսում, օգագործելով ՈՒԻՏ աղբյուրներ, ինչպես նաև ժամանակակից մեթոդներ և հնարներ, ՏՀՏ գործիքաշար: Դասապրոցեսի ընթացքում խնդիրները բազմաթիվ են և դրանց լուծումը կլինի արդյունավետ, եթե ուսուցիչը կարողանա հստակ կառավարել ուսուցման փուլերը , հմտորեն կիրառել այն մեթոդներն ու հնարները , որոնք կնպաստեն ուսման առաջադիմության խթանմանը:

Հետազոտության ընթացքում կանոնելու եմ նաև միջանձնային հարաբերությունները և փորձելու եմ մեծացնել համագործակցության արդյունավետությանը (սովերում չթողնելով պասիվ աշակերտներին), ինչպես նաև կիրառելով ՏՀՏ միջոցները կազմակերպվելու է առանձին թեմատիկ միավորի դասավանդման պրոցես՝ Padlet առցանց գործիքի օգնությամբ, հայտորոշվելու և ստուգվելու է աշակերտների ընթացիկ առաջադիմությունը և այն համեմատվելու է առանց «ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների և կրթական կայքի աղբյուրների ու մեթոդների օգտագործման նույնպիսի դասավանդման պրոցեսում աշակերտների ընթացիկ առաջադիմության հետ: Ձևավորող գնահատումը և հետադարձ կապը կատարվելու են « Quizizz ինտերնետային առցանց հավելվածի միջոցով:

Դիտարկելու եմ նաև դասավանդման պրոցեսում տեխնոլոգիաների կիրառումը

ինտերակտիվ մեթոդների հետ համատեղ, համառոտ անդրադառնալու եմ նաև աշակերտի ակտիվության աստիճանից կախված ուսուցման մեթոդների դասակարգմանը:

Դպրոցի զարգացման ժամանակակից փուլում, երբ առկա է բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության անկում, ծագում է նաև ֆիզիկա առարկայի դասավանդման մեթոդիկայի արդիականացման հարցը: Չի կարելի և հնարավոր չէ աշակերտին սովորեցնել այն ամենը, ինչն անհրաժեշտ է կյանքում, սակայն պետք է սովորեցնել ինքնուրույն ստանալ գիտելիքներ, կարողանալ դրանք օգտագործել կյանքում, պլանավորել զարգացման ուղին, հասկանալ երևույթների էությունը և այլն: Եվ այս ամենը ի կատար ածելու համար անհրաժեշտություն էր առաջացել գտնել այն ճանապարհները, որոնք կնպաստեն սովորողի առջև ծառայած խնդիրներին տալ լուծումներ:

Ինչպես Յ.Ա.Կոմենսկին էր նշում. « Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել մատնացույց անելով պատճառները, այսինքն ոչ միայն ցույց տալ թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ » :

Գրականության ակնարկ

Հանրակրթական դպրոցում ֆիզիկա առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա՝ պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցի ուսումնասիրված նյութը ընդլայնվելով և խորացնելով ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ առարկայական ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով սովորողների ընդհանրական գիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Ֆիզիկայի ուսուցման նպատակներն ու խնդիրները.

Ֆիզիկայի դասընթացի հիմնական նպատակներն են.

1. աշխարհի գիտական (ֆիզիկական) պատկերի ձևավորման հիմքերի ստեղծում՝ հիմնված ֆիզիկայի բնագավառում հայտնի փաստերի և տեսությունների վրա,
2. ծանոթացում գիտական հետազոտության մեթոդաբանությանը և բնության ճանաչման ֆիզիկական մեթոդներին,
3. ստեղծագործական ունակությունների, ֆիզիկական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, ինչպես նաև սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացում:

Ֆիզիկայի դասընթացի հիմնական խնդիրներն են.

1. սովորողներին ծանոթացնել ֆիզիկական օբյեկտներին, երևույթներին ու պրոցեսներին, դրանց փոխադարձ կապերին վերաբերող փաստերին և ընդհանրացումներին,
2. հաղորդել հիմնական գիտելիքներ նյութի կառուցվածքի, տարբեր երևույթների, նրանց դրսևորման օրինաչափությունների և օրենքների մասին,
3. ձևավորել դիտումներ կատարելու, փորձեր ծրագրելու և իրականացնելու, վարկածներ առաջադրելու, մոդելներ կառուցելու, տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվելու, որոշումներ կայացնելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողություններ և հմտություններ,
4. զարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը,
5. զարգացնել ֆիզիկական երևույթների հետազոտման՝ տեսական ուսումնասիրություններ և փորձեր կատարելու, սարքերի, գործիքների հետ վարվելու, չափումների արդյունքները մշակելու, համեմատելու և վերլուծելու, ընդհանրացումներ կատարելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություններ,
6. նպաստել հիշողության, դիտողականության, երևակայության զարգացմանը,
7. նպաստել մասնագիտական կողմնորոշմանը, զարգացնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու և դրանց միջոցով ֆիզիկայից գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման կարողություններ,
8. նպաստել տեխնոլոգիական պրոցեսների պահանջների անվերապահ կատարման և անվտանգության կանոնների պահպանումը գիտակցելու անհրաժեշտության դաստիարակմանը,
9. նպաստել սովորողների բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը և բնության պահպանության նկատմամբ անձնական պատասխանատվության գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը:

Հաշվի առնելով վերոնշյալները կարևորում եմ ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

Դասընթացը պետք է բաղկացած լինի տեսությունից, ֆիզիկական երևույթների ինքնուրույն և խմբային ուսումնասիրման առաջադրանքներից, տարբեր բնույթի խնդիրներից, լաբորատոր աշխատանքներից, ցուցադրումներից և տնային հանձնարարություններից, որոնք ընդգրկում են նաև հանձնարարություններ էլեկտրոնային դասագրքերից, ինտերակտիվ մոդուլներից: Տրվում են լաբորատոր աշխատանքների, ցուցադրումների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ): Ֆիզիկա առարկայի բովանդակային մեծ ծավալը և ավանդաբար որպես բարդ առարկա դիտարկելը, այն դարձնում են ոչ այնքան սիրելի, և բարդ ընկալելի աշակերտի կողմից, ուստի առաջանում է ուսումնական գործընթացը հետաքրքիր ու բովանդակալից կազմակերպելու խնդիրը, որպեսզի սովորողները ընկալեն դասընթացը և ստանան գիտելիքներ, ձեռք բերեն հմտություններ, որոնք հետագայում անհրաժեշտ կլինեն՝ անկախ սովորողի մասնագիտական կողմնորոշումից:

Այսօր աշխարհի գիտատեխնիկական զարգացումը ստիպում է ֆիզիկան սովորեցնել ոչ միայն ավանդական մեթոդներով՝ տալով միայն տեսական գիտելիքներ, առանց պրակտիկ ցուցադրումների, այլ ընդհակառակը, աշակերտների առաջ բացել նորագույն հայտնագործությունների գաղտնիքները, ակնառու ձևով ցուցադրել դրանց կիրառությունը կյանքում, ցույց տալ գիտությունների գեղեցկությունն ու ներդաշնակությունը: Այսօրվա աշակերտը իր հետաքրքրությունների ծարավը հագեցնում է համացանցի անձայրածիր տիրույթներում, դրանով իսկ աստիճանաբար անտարբեր դառնալով, իսկ որոշ դեպքերում նաև մերժելով ավանդական ուսուցման ձևերը:

Աշխարհի առաջատար կրթօջախները, քայլելով համընթաց առաջ եկող մանկավարժական մարտահրավերներին, փնտրելով լուծումներ, էլ ավելի են ընդլայնում և արմատավորում ինտեգրված ուսուցումը:

Գործնական համատեքստ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել ուսուցչի և աշակերտի փոխներգործուն գործընթաց կիրառելով բազմաթիվ ինտերակտիվ ուսուցման մեթոդներ և հնարներ, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում և յուրացում:

Դասընթացում կարևորում են ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (SZS) օգտագործումը, ինչպես տարբեր ֆիզիկական երևույթները դինամիկ զարգացման մեջ ցուցադրելու, այնպես էլ վիրտուալ փորձեր իրականացնելու համար: Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրելու են դասավանդման ժամանակակից մոտեցումները և մեթոդները ֆիզիկա առարկայի համատեքստում, մասնավորապես՝ ինտեգրված ուսուցում, միջառարկայական կապերի կիրառումը, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդների և հնարների կիրառումը ֆիզիկա առարկայի ուսուցման ընթացքում:

Նպատակներ՝

1. Զարգացնել դպրոցական տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողություններ ու հմտություններ

2. Զարգացնել ուսումնական նյութի բազմաշերտ ընկալումը, համատեղել, սովորողների գիտելիքները, փորձառությունները և հմտությունները, ձևավորել գիտական աշխարհայացքը

3.

Մեծացնել հետաքրքրությունը առարկաների նկատմամբ

4. Նպաստել սովորողների ներգրավվածության աստիճանի բարձրացմանը

Միակողմանի դասերը շատ ավանդական են և երբեմն հոգնեցնող թե մեր՝ և թե աշակերտների համար: Այնպես, որ պետք է ստեղծենք այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները խրախուսվում են և բարձրաձայնում՝ արտահայտելով իրենց գաղափարները: Աշակերտները կարող են միանալ դասարանի գործունեությանը տարբեր ձևերով, ոչ միայն ձեռքերը բարձրացնելով կամ պատասխանելու կանոններով: Կարող ենք ստեղծել դասի այնպիսի պայմաններ, որ մի քանի աշակերտների փոխարեն դասին մասնակցի օրինակ՝ ամբողջ դասարանը; Մեր ամբողջ դասարանը համալրենք խաղալով կենդանի վիկտորինաներ և խաղեր պտտվող անիվներով, կամ նույնիսկ բառերի ամպերի, հարցումների կամ համատեղ մտքերի փոթորկի միջոցով:

Մեթոդը գործունեության եղանակաների և հնարների յուրատեսակ համակարգ է, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան:

Մեթոդները բաղկացած են հնարներից՝ վարժություններից:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Հետագոտել եմ որոշ առաջավոր երկրների կրթական ոլորտները, որտեղ կրթության մակարդակը շատ ավելի բարձր է, կիրառում են ուսուցման այնպիսի մոդելներ, որոնց դեպքում գրեթե անտեսված է առանձին առարկայի գաղափարը:

Օրինակ կրթության ֆիննական մոդելը, իր բոլոր նորարական առանձնահատկությունների հետ միասին, առաջ է քաշում այնպիսի մի մոդել, ըստ որի, աշակերտը ուսումնասիրում է ոչ թե կոնկրետ առարկան, այլ որոշակի երևույթներ, գաղափարներ ու իրադարձություններ:

Դրանք ուսումնասիրվում է բազմակողմանի՝ տարբեր տեսանկյուններից, տարբեր հարթություններից:

Վերջին տասնամյակների ընթացքում մեր կրթական համակարգը կրել է բազմաթիվ ցնցումային փոփոխություններ: Հաճախ դրանք կրել են կործանարար բնույթ, միայն այն պատճառով, որ առանց մանրակրկիտ հետազոտությունների, առանց պատշաճ ուսումնասիրությունների, առանց երկար բարակ ծանր ու թեթև անելու, ուղղակի վերցրել ու կիրառել են օտար երկրների փորձն ու մեթոդները: Եվ հիմա, երբ կրթությունը կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առջև, այլևս անթույլատրելի են կոպիտ ու բիրտ պատճենումները: Այո, բազմաթիվ երկրներ կիրառում են նորագույն մանկավարժական մեթոդներ՝ կրթության ճապոնական մոդելը ձգտելով կատարելության, ձեռք է բերում նորանոր հետևողներ, ֆիննական մոդելը համարվում է լավագույնը հաջողվածների մեջ, վալդորֆյան մոդելը տարեց տարի ընդլայնելով աշխարհագրությունը դառնում է ավելի ճանաչված: Անվերջ կարելի է երկար թվարկել: Իսկ ի՞նչ անենք մենք, ինչպե՞ս բարեփոխենք մեր կրթական համակարգը, առանց վնասներ հասցնելու շահագրգիռ կողմերին: Յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է համակողմանի աշխարհայացք և արժեքների համակարգ, որը կառաջնորդի նրան իր ողջ կյանքի ընթացքում:

Դասապրոցեսին՝ կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Հասկանալի է որ յուրաքանչյուր մանկավարժ ինքն է ընտրում այն գործոնները, որոնք կարող են ազդել մեթոդների ընտրության վրա:

- ▶ *ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,*
- ▶ *ուսուցման նյութի քանակը և բարդությունը,*
- ▶ *սովորողների պատրաստվածության մակարդակը,*
- ▶ *ուսուցման կազմակերպման պայմանները,*
- ▶ *սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,*
- ▶ *ուսուցչի պատրաստվածության մակարդակը:*

Մեթոդը լինելով բազմաչափ հասկացություն ունի բազմաթիվ հատկություններ և առանձնահատկություններ, ինչի արդյունքում կան դրանց տարբերակման բավականին քիչ սկզբունքներ: Այդ իսկ պատճառով մանկավարժական գիտության մեջ չկա դասավանդման մեթոդների բացահայտման միասնական մոտեցում:

Տարբեր հեղինակներ առանձնացնում են ուսուցման հետևյալ մեթոդները՝ պատմվածք, բացատրություն, զրույց, դասախոսություն, քննարկում, գրքով աշխատանք, ցուցադրություն, նկարազարդում, վիդեո մեթոդ, վարժություն, լաբորատոր մեթոդ, գործնական մեթոդ, թեստային աշխատանք, հարցում (տարբերակներ՝ բանավոր և գրավոր, անհատական. ճակատային, խտացված), ծրագրավորված կառավարման մեթոդ, փորձարկման հսկողություն, շարադրություն, դիդակտիկ խաղ և այլն: Ուսուցման գործընթացում կիրառում են տարբեր մեթոդներ՝ և ամեն անգամ համոզվում են որ ոչ մի մեթոդ ունիվերսալ չէ և լավ արդյունքների կարելի է հասնել միայն մի շարք լրացուցիչ մեթոդների կիրառմամբ: Մանկավարժական կոմպետենտության կարևորագույն բաղադրիչը ուսուցչի՝ դասավանդման մեթոդները ճիշտ ընտրելու և կիրառելու կարողությունն է:

«**Ուսուցման մեթոդ**՝ հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր.

- ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն)
- ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ)
- ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր, ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն,

պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ և այլն:

Ուսուցման մեթոդի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա՝ ապահովելով կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.


- Ուսումնական դրական խթանի ձևավորում:
- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում:
- Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում:
- Ինքնագործունեության խթանում:
- Ճանաչողական գործընթացների զարգացում խոսք, հիշողություն, մտածողություն:
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում:
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում:
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում:
- Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում:
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Կամա թե ակամա յուրաքանչյուրս էլ պայմանավորված մատուցվող նյութից օգտվում ենք պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ մեթոդներից:


Պասսիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական

տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում:

Օրինակ՝ դասախոսությունը պասսիվ ուսուցման ամենատարածված ձևն է: Այս մեթոդը ես հաճախ կիրառում եմ ավագ դպրոցի 12-րդ դասարանում, քանի որ ձևավորված անհատներ են և տվյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:



Ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:





Մանկավարժության մեջ ուսուցման ակտիվ մեթոդների կողմնակիցներ են եղել Պետալոցցին, Կոմենսկին, Հեգելը, Դյուին:

Մեթոդի մասին կարելի է տեղեկություններ գտնել նաև անտիկ դարաշրջանի փիլիսոփաների մոտ(Шырова, 2016):

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ Եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:





Տեղի է ունենում ոչ միայն ուսուցիչ-աշակերտ փոխազդեցություն, այլ նաև աշակերտներն են փոխազդում միմյանց հետ՝ սովորում միմյանցից: Այս մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել միմյանց օգնելով գտնել տեղեկույթը և իրավիճակային խնդրի լուծման համար օգտագործել այն: Նմանատիպ դասապրոցեսի կազմակերպման համատեքստում ՏՀՏ-ները կարող են ուսուցչի լավագույն օգնականը դառնալ: Լինելով այս ոլորտին մոտ կանգնած մասնագետ, ես ամեն անգամ համոզվում եմ, որ ժամանակակից աշակերտն ավելի լավ է յուրացնում այն դասերն ու առաջադրանքները, որոնք ստեղծվում են ինտերակտիվ մեթոդներով և հնարներով: Հաշվի առնելով այն փաստը, որ ժամանակակից սերնդի պահանջները ավանդական մեթոդներով հնարավոր չէ բավարարել, ես իմ դասապրոցեսների ընթացքում հաճախ օգտագործում եմ նորագույն մեթոդներ և հնարներ, ինչպես նաև բազմաթիվ կրթական կայքեր, որոնք նպաստում են դասի որակի և սովորողների ուսման առաջադիմության բարձրացմանը: Հաճախ եմ օգտվում <https://phet.colorado.edu/en/simulations/category/physics> հավելվածից, <http://www.imdproc.am/>, sovorir.am, <https://esource.armedu.am/> և այլ կրթական կայքերից:

Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ կրթական կայքը, ուր ամփոփված են բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, երկրաչափություն) առարկաների դպրոցական ծրագրին և չափորոշչին համապատասխանող ուսումնական նյութերը, որոնք յուրացման համար յուրաքանչյուր թեմա ներկայացվում է ինտերակտիվ ձևով՝ ներառելով.

1. տեսական մասի պատկերավոր, անիմացիոն ներկայացում,
2. ցուցադրական նյութ,
3. լաբորատորաշխատանք
4. գործնական աշխատանք

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է յուրաքանչյուր դասի արդյունավետությունից: Առանց լավ մտածված մեթոդների դժվար է ապահովել ծրագրային նյութի իմացությունը: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործել այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք կօգնեն ներգրավել աշակերտին սովորելու աշխատանքին, կօգնեն նրան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կզարգացնեն մտածողությունն ու երևակայությունը:

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ակտիվ մեթոդների հետ լայնորեն կիրառվում է նաև խաղը: Այն ոչ միայն ակտիվացնելու, ներգրավելու միջոց է, այլև հնարավորություն է տալիս գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր՝ աշակերտների մոտ ստեղծելով առողջ աշխատանքային տրամադրություն ու ակտիվ մասնակցության միջավայր: Ստեղծված առողջ հոգեբանական մթնոլորտում աշակերտն իրեն զգում է ավելի հարմարավետ ու վստահ: Խաղն ու ակտիվ մեթոդներն օգնում են աշակերտներին ներգրավվել դասին և այդ ընթացքում ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ,

զարգացնում մտածողությունն և երևակայությունը: Մովորողները պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի, հետազոտողի, հետաքրքրասերի: Ներգրավվածությունը որոշ հեղինակների մոտ արտահայտվում է հիմնականում երեք բաղադրիչներով՝ զգայական, վարքագծային, ճանաչողական:

Հետազոտության ընթացքը

Նորարական մեթոդների ներմուծումը կրթական ոլորտ նպատակ է հետապնդում հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու դասաժամը, մատչելի դրաձնելու դասավանդելիք նյութը: Ապրելով տեխնիկապես հագեցած ժամանակաշրջանում, հասկանալի է, որ կրթական ասպարեզում անհրաժեշտություն կա ինտերակտիվ ուսուցման իրականացման, որը կանցկացվի տեխնիկական

տարբեր միջոցների օգնությամբ: Ինտերակտիվ մեթոդները առավել արդյունավետ մեթոդ են համարվում, այդ իսկ պատճառով կփորձեն հետազոտական աշխատանքս ներկայացնել այս համատեքստով, համոզված լինելով որ ինտերակտիվ մեթոդի շնորհիվ նոր դասավանդվելիք նյութը կհետաքրքրի սովորողներին, առավել հեշտ կյուրացնեն նոր նյութը և կդառնան անմիջական մասնակիցը:

Նախապատրաստական փուլում անցկացրել եմ հայտորոշում նպատակ ունենալով բացահայտել աշակերտների ուժեղ և թույլ կողմերը Քանի որ իմ նպատակն էր ստուգել ժամանակակից մեթոդների կիրառության արդյունավետությունը դասավանդման պրոցեսում՝ դասապրոցեսը կառուցել եմ մի քանի հնարներից և մեթոդներից կազմված հաջորդականությամբ: Քանի որ ավագ դպրոց հաճախում են տարբեր դպրոցի աշակերտներ և ես ծանոթ չլինելով աշակերտների կարողունակություններին և գիտելիքներին, հայտորոշման մեջ կարևորել եմ միջառարկայական կապը:

Տարբեր առարկաների միջոցով յուրացված նյութն օգնում է դպրոցականների գիտելիքների համակարգմանը, ամբողջական աշխարհայացքի ձևավորմանը:

Իմ փորձից եկել եմ այն եզրահանգման , որ ի վերջո ուսումնական առարկաների ինտեգրման նպատակային օգտագործումը պետք է՝

ա) պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար

բ) լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց

գ) գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա:

Հետազոտության ընթացքում դիտարկել եմ 10-րդ տնտեսագիտական հոսքում (շաբաթական 1 ժամ) սովորող աշակերտներին:

Հայտորոշման արդյունքում պարզեցի որ դասարանում սովորող 22 աշակերտներից՝ 1 աշակերտ հաղթահարել էր առաջադրանքների 60%-ը, 5-ը՝ 50%-ը, 4-ը՝ 30%-ը, իսկ մեծ մասը նույնիսկ չէին հաղթահարել անգամ 15%-ը:

Հաջորդիվ կատարվեց պարզաբանումներ , վեր հանվեց անհասկանալի հարցերը, լուծվեցին հարցաշարում առկա խնդիրները: Հատկացրել եմ ժամանակ՝ թեմաների ուսամնասիրության հետ զուգահեռ, թերացումները վերացնելու համար: Հաջորդ ուսումնասիրությունն իրականացրել եմ մեկ ամիս անց՝ օգտագործելով ժամանակակից մեթոդներ և հնարներ, նպատակ ունենալով ստուգել մեթոդների արդյունավետությունը և աշակերտների կարողունակությունների և գիտելիքների փոփոխությունը:

Հետազոտությունն անցկացրել եմ պասիվ և ինտերակտիվ մեթոդներով:

Առաջին խմբի հետ աշխատել եմ պասիվ մեթոդը՝ ապահովելով ուսուցիչ-աշակերտ

համագործակցությունը: Երկրորդ խմբի հետ աշխատել եմ նաև ինտերակտիվ մեթոդներով:

Շրջված դասարան փոխներգործուն մեթոդով նախապես Padlet առցանց գործիքի միջոցով աշակերտներին տրամադրվել են հղումներ, նյութեր, սահիկաշար և տեսադասեր:



Նյութի ընկալման աստիճանի ստուգումը կատարել էմ մտազրոհի օգնությամբ և պարզել որ առաջին խումբը բավարարվել էր միայն դասագրքային նյութով և հավելյալ ոչ մի տեղեկություն չունեին (թեև հանձնարարված էր փնտրել լրացուցիչ ինֆորմացիա), որոշ աշակերտներ նույնիսկ անպատրաստ էին,իսկ երկրորդ խումբի աշակերտները , ոչ միայն ուսումնասիրել էին իմ կողմից տրամադրված նյութերը, ունեին նաև հետաքրքիր փաստեր և դուրս էին բերել նաև անհասկանալի մի քանի հարց: Բնականաբար աշխատանքը կլիներ ապարդյուն , եթե ամբողջ դասարանը թեման չյուրացներ :Այդ նպատակով կիրառեցի խճանկար մեթոդը՝ որտեղ խմբի պատասխանատուները երկրորդ խմբի անդամներն էին և նրաքն աշխատեցին առաջին խմբի չորս ենթախմբերի հետ:

Խ Ճ Ա Ն Կ Ա Ր



Մեթոդի նպատակն է՝

- ◆ ուսուցանվող նյութի որոշակի հատվածի, հիմնախնդրի ուսումնասիրում
- ◆ դրանց ուսուցանում դասընկերներին

Մեթոդի փուլերն են՝

- ▶ Նյութի ուսումնասիրում և տեղեկատվության հավաքում
- ▶ Աշխատանք փորձագիտական խմբում
- ▶ Աշխատանք հենակետային խմբում
- ▶ Ավարտական աշխատանք
- ▶ Աշխատանքի ամփոփում

Դասի նախավերջին փուլում որպես ձևավորող գնահատման միջոց օգտագործվեց Quizizz առցանց գործիքը՝ գիտելիքների ստուգում իրականացնելու նպատակով:



Դասի վերջին փուլում աշակերտները լրացրել են անանուն ելքի քարտ, որը ներառում էր երեք հարց.

ՎԱՐԴ



Նշեք մեկ բան, որ լավ հասկացաք

ՓՈՒՇ



Նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք


ԲՈՂԲՈՋ




Նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ծագեց

Անանուն ելքի քարտը հնարավորություն է տալիս աշակերտներին անկաշկանդ, առանց լարվելու և ամաչելու(երբեմն աշակերտներն անհասկանալին փորձում են թաքցնել) արտահայտվելու, նշած պատասխանների հիման վրա կառուցվում է հաջորդ դասի առաջին փուլը: Հետազոտությանս արդյունքները ներկայացնում եմ տարբեր փուլերի դիագրամներով:

Հայտորոշում



Վերջնարդյունք



Եզրակացություն

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով դասը շատ հազեցած է և հետաքրքիր: Վստահ եմ, որ յուրաքանչյուր ուսուցիչ էլ ավելի է համոզվում, որ ուսուցման ավանդական մոդելը աստիճանաբար երկրորդ պլան է մղվում: Հաշվի առնելով ժամանակակից սերնդի հետաքրքրությունները, պահանջները և մոտեցումները, յուրաքանչյուրիս խնդիրն է կիրառել անպիսի ուսումնառության մեթոդներ, ձևեր և հնարներ, որ սովորողը կամա թե ակամա ինքը դառան նախաձեռնողը, մտածողը, ստեղծագործողը, նոր գաղափարներ առաջարկողը: Կարծում եմ, որ կրթական գործունեության մոտիվացիան կբարձրանա ի հաշիվ դասընթացի ոչ ստանդարտ ձևաչափի (անսովոր է, նշանակում է հետաքրքիր է):

Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները ոչ միայն սովորողների կողմից օգտագործվում են ստանդարտ ուսուցման իրավիճակներում, այլ նաև ստեղծագործության դրսևորման համար, ինչպես նաև մտավոր ունակությունների դրսևորման համար: Սակայն պետք է զգուշանալ տեխնոլոգիաների մոտեցումների հանդեպ անստեղծ կախվածությունից, ինչպես նաև առկա իրականությունից կտրվելու վտանգից: Կարևորում եմ, որ անհրաժեշտ է դասի ընթացքում ստեղծել ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսել իմացական ցանկացած գործընթաց, խրախուսել յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ, բնականաբար այս ամենը կնպաստի զարգացած, բանիմաց, պրպտող և խելացի անձ ձևավորելու գործընթացին:

«Գոյություն ունեցող ամեն ինչի ամբողջ այս բազմազանությունը բնության մեջ, որոնք տեսնում ենք, թե ինչպես են համապատասխանում տարբեր ժամանակներին ու վայրերին, չի կարող ա՛յլ բանից սերել, քան միայն՝ գաղափարներից ու կամքից: Հանձարը մտքի համբերությունն է, որ կենտրոնացած է մի որոշակի ուղղությամբ».

Իսահակ Նյուտոն

Գրականության ցանկ

- ▶ Ուսուցման արդյունավետ հնարներ
- ▶ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
- ▶ Դասավանդման մեթոդները և դրանց դասակարգումը
- ▶ <https://srcaltufevo.ru/hy/metody-obucheniya-ih-klassifikaciya-metody-priemy-i-formy-obucheniya.html>
- ▶ Ուսուցման 15 նորարարական մեթոդ ուղեցույցով և օրինակով
- ▶ <https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/>
- ▶ <https://lib.armedu.am/article/1119>
- ▶ <https://www.youtube.com/watch?v=V2TE-UNc6jg&t=19s>
- ▶ <https://www.youtube.com/watch?v=mepAIFIDSiQ>
- ▶ <https://www.youtube.com/watch?v=QISz0IBpb80>
- ▶ <https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html>
- ▶ Սարուխանյան Ս., Դավլաբյան Ա., Դիշադաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր 2008թ, էջ 6-7
- ▶ Աբրահամյան Ա. Վ., Ֆալոսյան Ժ., « Միջառարկայական կապերի մի քանի ընդհանուր հարցեր», գիտական հոդվածաշար 20
- ▶ Մովսիսյան Մ. Ա. «Գիտելիքների միավորումը մանկավարժության մեջ » 2017թ